ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 29-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի նիստը՝ նվիրված Կ. Մարքսի ծննդյան 165-ամյակին և մահվան 100-ամյակին։ Նիստին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաֆյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվետլովան, ՀԿԿ կենտկոմի բաժինների վարիչներ Ա. Պ. Մելիքոնյանը, Յու. Ե. Խոջամիրյանը։

Նիստը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Տիեզերքի ճանաչման պատմության ընթացքում, ասաց նա, անհրաժեշտ եղավ համարյա երկու հազարամյակ, մինչև մարդուն հաջողվեց հասկանալ մոլորակների շարժման պարզ օրինաչափությունները։ Նախ, Կոպեռնիկոսը ապացուցեց, որ այդ օրինաչափությունները ակնհայտ են դառնում, երբ մոլորակների շարժումն ուսումնասիրում են Արեգակի նկատմամբ։ Ապա, երբ անցան արևակենտրոն համակարգի, Կեպլերը որոշեց մոլորակների շարժման ճշգրիտ օրինաչափությունները։ Մարդկային հասարակության մեջ շարժման ու զարգացման օրինաչափությունների հայտնաբերումը, սակայն, ավելի բարդ էր ու դժվարին։ Եթե մոլորակի դիրքը և շարժումը յուրաքանչյուր պահի կարելի է նկարագրել ընդամենը մի քանի պարամետրերի միջոցով, ապա հասարակության մեջ մարդու դիրքի և նրա փոփոխության նկարագրությունը կարող է պահանջել շատ մեծ քանակի տարբեր պարամետրեր։ Այդ առումով էլ հասարակական երևույթները շատ ավելի բարդ էր օբյեկտիվորեն ճանաչել, որը և հաջողվեց միայն Մարքսի հանճարին։

Զուգահեռներ անցկացնելով Կ. Մարքսի և Կոպեռնիկոսի միջև, շարունակեց Վ. Համբարձումյանը, ուզում ենք նշել, որ երկու դեպքում էլ գործ ունենք գիտական մեծագույն հեղափոխությունների հետ. Կոպեռնիկոսինը՝ տիեզերքի ճանաչման և Կ. Մարքսինը՝ հասարակության օրինաչափությունների ճանաչման մեջ։ Բայց Կ. Մարքսի սկսած գիտական հեղափոխությունը չսահմանափակվեց հասարակական գիտությունների բնագավառում։ Այն տարածվեց բոլոր գիտությունների վրա, քանի որ Կ. Մարքսը դարձավ դիալեկտիկական մատերիալիզմի երկու անմահ հիմնադիրներից մեկը, որոնցից մյուսը Ֆ. Էնգելսն էր։ Իսկ մարքս-լենինյան փիլիսոփայությունն ունի մեծագույն նշանակություն ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտությունների զարգացման համար։ Դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներից ելնելով էլ Կ. Մարքսը նոր տեսանկյունով վերլուծեց ու հիմնավորեց հասարակական երևույթները։

Կ. Մարքսի հաջորդ գիտական նվաճումը, ասաց Վ. Համբարձումյանը, պատմության մատերիալիստական ըմբռնումն է, որի հիմնական գաղափարներից մեկն այն է, որ նյութական արտադրության ձևը «պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր պրոցեսներն ընդհանրապես»։ Կ. Մարքսը ցույց տվեց դասակարգային պայքարի գլխավոր դերը հասարակության պատմության մեջ և դրա հիման վրա ստեղծեց մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնց Վ. Ի. Լենինը տվել է ամենաբարձր գնահատականը։ Կ. Մարքսի մյուս խիզախումը նրա հանճարեղ տնտեսական ուսումնքն է։ Մեծ մտածողը հանգեց այն եզրակացության, որ կապիտալիստական հասարակարգն անխուսափելիորեն փոխարինվելու է հասարակության զարգացման ավելի բարձր փուլով՝ սոցիալիստականով։ Այստեղից էլ Կ. Մարքսը որպես մեծ հեղափոխական, միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ, ինտերնացիոնալիզմի եռանդուն պրոպագանդիստ։ Կ. Մարքսի ուսմունքը պետք է գնահատվի նաև նրանով, որ նրա ազդեցության տակ աճեց ու զարգացավ Վ. Ի. Լենինի հանճարը, նրա հեղափոխական միտքը, մի հանճար, որը ռեալ ճանապարհ բացեց դեպի մարդկության լուսավոր ապագան։ Մարդկության կոմունիստական ապագան կերտելու համար մենք՝ սովետական մարդիկ, սոցիալիստական երկրների ժողովուրդները պետք է աշխատենք, աշխատենք ու աշխատենք, վերջում ասաց Վ. Համբարձումյանը։ Ավելի մեծ խնդիրներ են դրվում սովետական գիտության առջև։ Եվ այս գործում Կ. Մարքսի ու Վ. Ի. Լենինի ժառանգությունը

ծառայում է որպես փարոս, որպես մշտական ուղեցույց։

Նիստում «Կարլ Մարքսը և սոցիալիզմի քաղաքատնտեսության պրոբլեմները» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։ Կ. Մարքսի տնտեսագիտական ամբողջ տեսության կարևորագույն բաղկացուցիչ մասը նրա տնտեսագիտական ուսմունքն է, ասաց նա։ Մեծ մտածողի տնտեսագիտական աշխատությունների գլխավոր բովանդակությունը կապիտալիստական արտադրական հարաբերությունների բազմակողմանի և խոր վերլուծությունն է։ Բայց նրա ծառայությունն ամենևին չի սահմանափակվում կապիտալիզմի հետազոտությամբ։ Կ. Մարքսի աշխատություններում կան գիտական հանճարեղ հայտնագործություններ, որոնք վերաբերում են սոցիալիստական էկոնոմիկայի տեսության հիմունքներին և ելակետային դրույթներ են սոցիալիզմի քաղաքատնտեսության մշակման համար։ Այնուհետև Ա. Առաքելյանը հանգամանորեն անդրադարձավ սոցիալիստական էկոնոմիկայի առաջացման և զարգացման մասին Կ. Մարքսի ուսմունքին, տարբեր հասարակարգերում, այդ թվում նաև սոցիալիզմի օրոք գոյություն ունեցող ընդհանուր տնտեսական օրենքների և կատեգորիաների մասին նրա տեսության հիմնական ու գլխավոր դրույթներին, ապա կանգ առավ այդ ուսմունքից բխող սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման արդի փուլում առանձնակի հրատապություն ունեցող մի քանի պրոբլեմների վրա։ Մարքսիստական դիալեկտիկական մեթոդի կիրառման շնորհիվ սոցիալիզմի տնտեսական օրենքները և կատեգորիաները, շարունակեց զեկուցողը, լուսաբանված են խորապես ու բազմակողմանի։ Սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման հիմնական ուղիների և դրա արմատական հատկանիշների մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարները ստուգվել ու հաստատվել են կյանքում, ամրապնդվել քաղաքատնտեսության գաղափարների զինանոցում։ Մարքսիզմը իր ստեղծագործական հետագա զարգացումը ստացավ լենինիզմի մեջ։ Առանց լենինյան գաղափարներով հարստացման անհերքելի կլիներ մարքսիզմի վիթխարի ազդեցությունն արդի դարաշրջանի վրա։ Մարքսի ուսմունքը զարգացվել է ՍՄԿԿ-ի կողմից մեր երկրում սոցիալիզմի կառուցման փորձի ընդհանրացման հիման վրա և մյուս երկրների մարքսլենինյան կուսակցությունների կողմից։ Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմների մշակման գործում որոշակի ավանդ են ներդրել սովետական և մյուս երկրների մարքսիստ տնտեսագետները, վերջում ասաց Ա. Առաքելյանը։ Դրա շնորհիվ ստեղծվել է սոցիալիզմի քաղաքատնտեսությունը, որը գաղափարական հզոր զենք է կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում։

* * *

Մարտի 29-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաֆյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Ք. Սվերդլովան, ՀԿԿ Կենտկոմի բաժինների վարիչներ Ա. Պ. Մելիքոնյանը, Յու. Ե. Խոջամիրյանը։

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. նոյեմբերյան պլենումում, ասաց նա, ընկեր Յու. Վ. Անդրոպովն աշխատանքային բոլոր կոլեկտիվների առջև խնդիր դրեց աշխատել առավել կազմակերպվածությամբ ու նպատակասլացությամբ։ Դա ամբողջովին վերաբերում է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիային։ Առաջադրված նոր պահանջների ոգով ակադեմիայի բոլոր հիմնարկներն այժմ վերակառուցում են իրենց աշխատանքը, միջոցներ ձեռնարկում գիտական մշակումների արդյունքներն ըստ ամենայնի օգտագործելու տնտեսական և սոցիալական պլանների իրականացման համար։ Այնուհետև Վ. Համբարձումյանը վերլուծեց հաշվետու տարում ակադեմիայի ստորաբաժանումների գործունեության արդյունքները, նշեց հիմնարար ու կիրառական հետազոտությունների ասպարեզում հայ գիտնականների կարևոր նվաճումները, գնահատեց ակադեմիայի, նրա ինստիտուտների հետազոտությունների արդյունքների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքը։

Անդրադառնալով գիտական հետազոտությունների արդյունավետության և աշխատանքի որակի բարձրացման հարցերին, Վ. Համբարձումյանը նշեց այդ գործում նորադույն սարքավորումների օգտագործման, կոնստրուկտորական հատուկ բյուրոների և փորձնական արտադրական բաղաների լայն ցանցի ստեղծման խիստ անհրաժեշտությունը, խոսեց կադրերի որակավորման բարձրացման, երիտասարդ կադրերի պատրաստման, գիտական աշխատողների նկատմամբ պահանջկոտության, կատարողական կարգապահության բարձրացման խնդիրների մասին։

Խոսելով հանրապետության գիտական ստորաբաժանումների առաջնահերթ խնդիրների մասին, Վ. Համբարձումյանը նշեց հանրապետության գիտության համակողմանի զարգացման նկատմամբ Հայաստանի կոմկուսի ԿՆԿ-ի և

հանրապետության կառավարության կողմից ցուցաբերվող ամենօրյա մեծ օգնությունը։

Վերջում Վ. Համբարձումյանը հավաստիացրեց, որ հանրապետության գիտության աշխատողներն իրենց ջանքերը կնպատակամղեն ՍՄԿ՝ XXVI, Հայաստանի կոմկուսի XXVII համագումարների, ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. նոյեմբերյան պլենումի տուաջադրած խնդիրների կատարմանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1982 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։ Խոսելով ակադեմիայի ինստիտուտների և գիտական հիմնարկների ձեռք բերած հաջողությունների մասին, նա նշեց, որ ակադեմիայի նախագահության, բաժանմունքների, ինստիտուտների, գիտական աշխատողների ջանքերը հաշվետու տարում նպատակամղված են եղել հիմնարար հետազոտությունների զարգացմանը, դրանց հիման վրա կիրառական մշակումների արդյունավետության բարձրացմանը, այն խնդիրների իրականացմանը, որոնք գիտության առջև դրված են ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան և նոյեմբերյան պլենումների որոշումներով։

1982 թ. հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկներում գիտահետազոտական աշխատանք է տարվել 549 թեմա ընդգրկող 175 պրոբլեմի գծով։ Զեկուցողը խոսեց գիտության տարբեր բնագավառներում կատարված ներդրումների, մշակումների, գիտության և արտադրության կապի հետագա ամրապնդման, հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների զարգացման ուղղությամբ ակադեմիայի գործունեության մասին, նշեց արտադրության մեջ գիտության նվաճումների ներդրման գործում տեղ գտած թերությունները, անդրադարձավ այդ հարցում ԳԱ նախագահության գործունեությանն ուղղված ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության իրավացի քննադատությանը։ Այնուհետև Գ. Գալոյանը հանգամանորեն խոսեց ՀՍՍՀ ԳԱ նախագահության և բաժանմունքների, նախագահությանն առընթեր գիտական խորհուրդների, մասնավորապես խմբագրական-հրատարակչական խորհրդի գործունեության և աշխատանքների, գիտական ինտեգրացիայի, ՀՍՍՀ ԳԱ միութենական և միջազգային կապերի մասին։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Գ. Ս. Սահակյանը, ակադեմիայի թղթակից-անդամներ Պ. Մ. Գերուսիմ. Ս. Հ. Մովսիսյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռ. Մ. Մարտիրոսյանը։

Տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն։

Բազմաբեղուն, անխոնջ և հանրօգուտ գիտական գործունեության համար «Մեծարման գրի» արժանացավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Դ. Ն. Բարայանը։ Գիտության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Ա. Ա. Գալոյանը, Մ. Ե. Մովսիսյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր Լ. Հ. Երզնկյանը, պատմական գիտությունների դոկտոր Լ. Հ. Բաբայանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Ա. Գևորգյանը։ 1982 թ. գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր»։ Ժողովում «Ջորրորդային ամոնիումական միացությունների գործնական կիրառման հնարավորությունները» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Թ. Բաբայանը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 28-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1982 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։ Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկների գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են եղել ՍՄԿԿ XXVI համագումարի, ՍՄԿԿ և ՀԿԿ Կենտկոմների պլենումների համապատասխան որոշումների կատարմանը։ 1982 թ. բաժանմունքի ինստիտուտներն անմիջականորեն ղեկավարվել են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. նոյեմբերի 27-ի «Գիտական հետազոտությունների հետագա զարգացման և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նյութատեխնիկական բազայի ամրապնդման միջոցառումների մասին» և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության 1978 թ. փետրվարի 23-ի՝ «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների զարգացման հիմնա-

կան ուղղություններ և հեռանկարների մասին» որոշումներով։ ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներից ելնելով, բաժանմունքը և ինստիտուտները ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ, որոնց իրագործմամբ կբարձրանա ինստիտուտների գիտական հետազոտությունների մակարդակը, արդյունավետությունը և կարգապահության դրվածքը։ Հաշվետու տարում, նշեց Բ. Առաքելյանը, բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 25 անուն գիրք։ Այնուհետև զեկուցողը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, «Սիբիրյան հայ համայնքների պատմության և մշակույթի» բաժնի գործունեության մասին, նշեց ձեռք բերված նվաճումները, տեղ գտած թերությունները։ Ապա Բ. Առաքելյանը անդրադարձավ ինստիտուտների գիտաշխատողների ծավալած գիտամասսայական աշխատանքներին, կազմակերպված նստաշրջաններին, արտասահմանյան գործուղումներին, հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, մասնավորապես Ուրարտու պետության պատմության հարցին, պատմության կեղծարարներին և այլն։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ա. Գալոյանը, Մ. Գ. Ներսիսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Խ. Սարգսյանը, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Գ. Սաճակյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1982 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին ինստիտուտների ֆինանսական վիճակի, հայ ժողովրդի պատմության, նրա ծագման ու կազմավորման մի շարք հարցերի, Մ. Խորենացու ծննդյան 1500-ամյակը նշելու նախապատրաստական աշխատանքների, պատմության կեղծարարների մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Բ. Առաքելյանը։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը և պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանը։ Գ. Ղարիբջանյանի զեկուցման թեման էր «Կ. Մարքսը և ճնշված ժողովուրդների ազատագրության հարցը», իսկ Խ. Բարսեղյանինը՝ «Կ. Մարքսի աշխատությունների հայերեն հրատարակության պատմությունից»։

Պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանը։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 25-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1982 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Ա. Բրուտյանը։ Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքը և նրա հիմնարկները շարունակել են աշխատանքները ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների պատմական որոշումների կենսագործման ուղղությամբ։ Բաժանմունքի բոլոր հիմնարկները ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի ներքո վերանայել են գիտահետազոտական աշխատանքների պլանները, անցկացրել մի շարք գիտական նստաշրջաններ՝ նվիրված համագումարի նյութերին։ Հաշվետու տարում բաժանմունքի ինստիտուտները զեկավարվել են Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. նոյեմբերի 27-ի «Գիտական հետազոտությունների հետագա զարգացման և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նյութատեխնիկական բազայի ամրապնդման միջոցառումների մասին» և ՍՍՀՄ ԳԱ նախագահության 1978 թ. փետրվարի 23-ի «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հետազոտությունների զարգացման հիմնական ուղղությունների և հեռանկարների մասին» որոշումներով։ 1982 թ., ասաց զեկուցողը, բաժանմունքի ինստիտուտների մակնիշով լույս է տեսել 32 անուն գիրք։ Առանձնապես նշելի է Կ. Մարքսի ծննդյան 165-ամյակի և մահվան 100-ամյակի կապակցությամբ հրատարակված «Կ. Մարքսի տեսական ժառանգությունը և արդիականությունը» հոդվածների ժողովածուն, որը հրատարակել են ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտն ու ՍՍՀՄ փիլիսոփայության ընկերության հայկական բաժանմունքը։ Այնուհետև Դ. Բրուտյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, գրակա-

նության և արվեստի ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի, կոորդինացիոն գիտական խորհուրդների գործունեության մասին, նշեց ձեռք բերված կարևոր նվաճումները, տեղ գտած թերությունները, անդրադարձավ այն խնդիրներին, որոնց լուծումը կնպաստի հայրենական գիտության հետագա զարգացմանը։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղայանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Ռ. Վ. Զարյանը, Վ. Ս. Նալբանդյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1982 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին սիմպոզիումների, տեսական սեմինարների կազմակերպման, համահավաքի ստեղծման սկզբունքների, գրականության և արվեստի թանգարանի երկենթակայության, կոորդինացիոն խորհուրդների գործունեության, ինստիտուտներում հաշվողական տեխնիկայի ներդրման, հայ փիլիսոփայության պատմության բազմահատորյակի ստեղծման եղանակների ու սկզբունքների մասին։ Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Բրուտյանը։

Ժողովում լսվեցին մի շարք զեկուցումներ։ Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը և փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Մ. Էկմայանը հանգես եկան «Կ. Մարքսը արտադրության գործիքային ձևերից պրոցեսային ձևերին անցնելու օրինաչափությունների մասին» զեկուցումով։ Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գ. Աբրահամյանը զեկուցեց ժամանակակից հայերենի տերմինակազմության մի քանի հարցերի, իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ն. Սարգսյանը՝ հայ գրական քննադատության պատմության պարբերացման խնդրի մասին։ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մաճոյանի զեկուցումը նվիրված էր գիտական գիտելիքի միասնության պրոբլեմին։